

Ասոնցմէ եւ ոչ մին մեր կոնդակին թուականին կը միաբանի. եւ սակայն ճիշդ թուականը կոնդակինն է, զոր կը ստուգեմ Աջապահեան տնէն Սոյ Եփրեմ Կաթողիկոսին (1771—1785) մէկ գրութենէն, որուն օրինակը Վիեննայի Մխիթ. Մատենադարանը կայ Թ. 90 (Տաշեան, էջ 357): Ասոր համեմատ՝ Գրիգոր Կեսարացի «Ուղուրլու», կաթողիկոս Ամասիա վախճանեցաւ 1727ին, եւ յաջորդ հռչակուեցաւ Տէր Աբամ, որ Ա. Յովհաննէս Հաճնցոյն (1705—1721) մէկ ազգականն էր. ասիկայ ալ անոր նման Հաճին նստաւ, եւ անշուշտ աւելի ազդեցութիւն վաստըկելու համար՝ անոր անունն ու կնիքն ալ սկսաւ գործածել, որով թէպէտ 1727ին սկսած կ'ըլլայ, սակայն իր կոնդակներուն վրայ իբրեւ սկզբնաւորութեան թուական 1705 նշանակուած կը գտնուի. («Զի իբրեւ վախճանեցաւ Տէր Գրիգոր Կաթողիկոսն ի յԱմասիա, յաջորդեաց զաթոնն Տէր Աբամ, ազգական Հաճնցի Տէր Յովհաննէս Կաթողիկոսին, եւ կոչեցաւ Յովհաննէս. եւ վարէր կնքաւ Տեառն Յովհաննիսի մեծի եւ առաքինւոյ Կաթողիկոսի. եդաւ Տէր Աբամս այս ըստ անուանակցոյն իւրոյ յերկրորդ ադենս՝ գործել եւ պահել. բայց անճաշակ գոլով սա ի քաղցրութենէն մեղեր Աստուածային իմաստից՝ ոչ բարոք պահէր զսուրբ Աթոն», 2. Եփրեմայ, էջ 63:) Յակովբոս-Մեսրոպ Եպիսկոպոսի կոնդակին համեմատ՝ 1742ին դեռ ողջ է սոյն Բ. Յովհաննէս, յասն անծանօթ կը մնայ տակաւին: